

**ԱՍՏԱԿԻ ՓԱՇԱՅԱՆ**  
Քիմիական գիտությունների թեկնածու

## Հ. ԳՐԻԳՈՐԻ ԳԱԼԵՄՔՅԱՐՅԱՆԻ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վեճատիկի և Վիեննայի Մխիթարյանները շուրջ երեքհարյուրամյա վաղեմությամբ գրական-գեղարվեստական, հոգևոր, առյուղագիտական, բառարանագրական, թարգմանական և հայագիտական տարաբնույթ արդյունաշատ գործունեությամբ զուգահեռ հետազա սերունդներին են ժառանգել զուր բնագիտական հսկայածավալ գրականություն։ Դրանք դասագրքեր են, մենագրություններ, հանրագիտարաններ, գիտահանրամատչելի ուսումնասիրություններ, բնագիտական թարգմանություններ<sup>1</sup>:

Վիեննայի Մխիթարյան միարանության բնագիտական ժառանգության մեջ իրենց արժանի տեղն ունեն հիշյալ միարանության անդամ, բանասեր, մամովի տեսաբան, մատենագետ և դրամագետ Հ. Գրիգորիս Գալեմքյարյանի բնագիտական ուսումնասիրությունները:

Գ. Գալեմքյարյանը<sup>2</sup> իր բնագիտական աշխատությունները հրատարակել է երիտասարդ հասակում՝ 1887-1889 թվականներին, որից հետո այլևս չի անդրադարձել այդ բնագավառին։

«Հանդէս ամսօրեալ»-ի ամդրամիկ համարներում 1887-ին լուս է տեսել Գ. Գալեմքյարյանի բնագիտական առաջին ուսումնասիրությունը՝ «Լուսոյ և շերմութեան էութիւնը»։ Հանդարձակ այս հոդվածում ներկայացվում են լուսին և շերմությամբ վերաբերվող ժամանակի ըմբռնումները։ Առա մի հատված այդ հոդվածից։ «Սահիտակ լոյսը բազմագունեան ճառագայթներէ բաղկացած է, որոնց բաղադրությննեն սպիտակը յառաջ կու գայ։ Բայց մի-այն նոյնագոյն ճառագայթներ, այսինքն անոնք, որ ալեաց (ալիքների - Ա. Փ.) հաւասար

<sup>1</sup> Տե՛ս. Ռ. Գարբինյան, Վենեփիկի Մխիթարյանները և դարվինիզմը, Երևան, 1948, 64 էջ։ Ա. Առաքյան, Հայ ժողովրդի մրգակոր մշակույթի զարգացման պարմություն, հետ. 3, Երևան, 1975, 511 էջ։ Ա. Փաշյան, XIX դարի թիման հայ ընագելիքների աշխատություններում, Երևան, 1992, 160 էջ։ Նոյնին, 18-19-րդ դարերում Վենեփիկի Մխիթարյան միարանության բնագիտական հրատարակությունները, «Էջմիածինի ամսագիր», 1998, հ. ԺԲ։ Նոյնին, Մխիթարյանների բնագիտական հրատարակությունները ԺՀ-ԺԹ դարերում, «Բազմավիճակ», 2001, հ. 1-4։ Նոյնին, Գարբիկի Մեննիվշյանը՝ նաև բնագիտական աշխատությունների հեղինակ, «Հանդէս ամսօրեալ», 2000 թ., հ. 1-12։ Նոյնին, Մարտիրա Գարբագյանը և իր «Նկարագիր ուսմանց» աշխատությունը, «Պարմա-բանափական հանդիս», 2004 թ., №2, էջ 130-142։ Նոյնին, Սիմոն Երևանյանի գիտական ու գրական ժառանգությունը, «Պարմա-բանափական հանդիս», 2004, № 3, էջ 130-148։ Նոյնին, Հայր Միքան Բժշկյանի «Ծննդարան գիրքնաց» հանդագիտաբանը, «Բազմավիճակ», հ. 1-4, էջ 463-475։

<sup>2</sup> Գրիգորիս Գալեմքյարյանը (Վազակին անունը՝ Գևորգ) ծնվել է Կոստանդնուպոլիսում, 1862 թվականին։ 1875-ին մեկնել է Վիեննայի Մխիթարյան միարանություն այնքան ուսանելու նպարակով։ 1880-ից դարձել է հիշյալ միարանության անդամ։ 1885-ից աշխատել է միարանության դպրոցներում։ 1896-1898 թվականներին «Հանդէս ամսօրեալ»-ի խմբագիրն էր։ Վահանների է 1917 թվականին Վենեփիկում (Տե՛ս. Ն. Ակինյան, Շ. Գրիգորիս ծ. Գ. Գալեմքյարյան, «Հանդէս ամսօրեալ», 1917-1918, էջ 113-130)։

դրկայմութիւն ունին, կրնան զիրար եղծանել (այստեղ՝ մարել իմաստով - Ա. Փ.) կամ զօտացընել: Անոր համար կրնայ հանդիպիլ, որ լուսոյ բաղադրիչ մասունքներէն միայն մէկն, ոինչպէս կարմիրն, այնպիսի դրից մէջ մտնէ, ուր իրարու եղծումը կամ ոչնչացումն յառաջ լուգա: Այս ատեն մէկալ ճառագայթներն անփոփոխ կը մնան: Բայց որովհետեւ կարմիրը և ափիտակն կը բաժնուի կ'ելլէ, վերջինս կանաչի կը փոխուի, վասն զի սակաւակարմիր ևներմակը կանանչ կը ծնամի»<sup>3</sup>:

Այստեղ քննարկված են ֆիզիկայի կարևորագույն բնագավառներից մեկի՝ սպիտակ լուսի բնույթին և, այսպես կոչված, լուսի ինտերֆերենցիային առնչվող խնդիրները: Այս իմաստով Գ. Գալեմբյարյանը առաջինն է մեզանում, որն անդրադարձել է հիշյալ խնդիրներին:

Վերը նշված հոդվածում Գ. Գալեմբյարյանը անդրադարձել է ջերմության հարցերին ևս: Նա մանրամասնորեն քննարկել է ջերմության բնույթը, չափման միավորները: Անդրադարձել է նաև մեխանիկական էներգիան ջերմայինի վերածելու խնդիրներին<sup>4</sup>:

Հայտնի է, որ բնույթան մեջ կատարվում են շատ ու շատ բնական երևույթներ, որոնցից նմարդկությունը չի կարողանում լավագույնս օգուտներ քաղել իր այս կամ այն նպատակը նիրագործելու համար: Հայրու հազարավոր մեծ ու փոքր ջրվեժներ մոլորակի տարրեր մասներում զարավիժում են օր ու գիշեր տարրեր բարձրություններից, և մարդու ջրի մեխանիկական էներգիան օգտագործելու մասին նորանոր ծրագրեր է նախագծում: 19-րդ դարի վերջին Գ. Գալեմբյարյանին ևս հուգել է այս հարցը: Ահա այդ մասին իր արտահայտուած կարծիքը. «Նույնական Հյուսիսային Ամերիկայի Նիազարա գետին ջրվեժը՝ ուր ամեն ժամ 1100 միլիոն տակառաչափ ջուր 150 ոտք բարձրութենեն կրօսիվի, 16800 հազար ձիու զորության կիավասարվի, սակայն անհնար է զորության (այստեղ՝ էներգիա իմաստով - Ա. Փ.) գործել»<sup>5</sup>:

Գ. Գալեմբյարյանի հիշյալ հոդվածում չափազանց կարևոր տեղեկություն կա անզիացի աստղագետ Վիլյամ Հերշելի (1738-1822 թթ.) աստղագիտական կարևոր մի հայտնագործության մասին. «Արդ, արդէն դարուս սկիզբը Փ. Վ. Հերշել մեծ աստղագետը գտաւ՝ որ զիսաւորաբար անդրակարմիր ճառագայթները ջերմութիւն կը ծնանին. արեգական առնեց արձակած ջերմութեան ճառագայթից կէսն ընդհանրապէս չերեւար: Անդրամանու-

<sup>3</sup> Գ. Գալեմբյարյան, Լուսոյ և ջերմութեան էլութիւնը, «Հանդէս ամսօրեսայ», 1887, հ. 2, էջ 18:

<sup>4</sup> Լայն իմաստով լույսը օպտիկական ճառագայրում է, որը, բայց սպեկտրի տիպանների փրկույթից, ընդորություն է նաև ոլդրամանելուակագոյն և նիֆրակարմիր ալիքների լայն փրկույթները: Անզիացի ֆիզիկոս և մաքւ-մաքիկոս Խաչակի Նյուփոնը (1642-1727 թթ.) առաջինն է փոկ սովորական սպիտակ լույսի՝ փարբեր գույների լուսերից կազմված լինելու փասդը: Լույսի ինտերֆերենցիան 19-րդ դարի սկզբին հայդնարենի նև թ. Ցունը և Օ. Ֆրենելը:

<sup>5</sup> 19-րդ դարի վերջին Գ. Գալեմբյարյանի թերած փյալաները շափ մուր նն իրականում առկա փյալաներին: Նիազարա թրվեմի միջին ծախսը վայրկյանում 5900 խորանարդ մնարք է: Հափ այդմ, եղովածի հենդինակի թերած 100 միլիոն փակառաչափ ծախսը մեր թերած փյալաներին համբեկներու համար պեփք է ընդունել մնկ բակասի պարունակությունը 200 լիտրին մուր, որը դրամարանական է: Անչափ հենքարքիր է Գալեմբյարյանի թերած մյուս փյալը: Նա Նիազարա թրվեմի միջին բարձրությունը հաշվին է 150 ոտք: Իրավաեւմ այն 48 մնարք է: Ուրեմն Գալեմբյարյանի փյալով մնկ ուրքը որպես չափման միավոր պեփք է լինի 32 սանդիմներին հակասար: Այս փյալը շափ մուր է ուրարտական միջին ուրսակափին, որը 31,4 սանդիմները է:

շակ ու մանուշակ ճառագլութերն առանձին յատկութիւն մը ունին, որ գլխաւորաբար քի-միական ազդեցութիւն կ'ընեն և արծաթաղը կը սեցընեն: Ասոնց լուսանկարի Ակատմամբ ունեցած նշանակութիւնն ասոր վոյա կայացած է»<sup>6</sup>:

Անչափ գարմանապի է, որ նման կարևոր իրողությունը որուս է մնացել հայ աստղագիտության քաջազիտակ Բ. Թումանյանի ուշադրությունից: Իր հանրահայտ «Հայ աստղագիտության պատմություն» երկնատոր հիմնարար աշխատության երկրորդ հատորն ընդգույն է 19-րդ դարի սկզբից մինչև 1920 թվականը: Գ. Գալեմքյարյանի հիշյալ բողվածը, ինչպես նշեցինք, լույս է տեսել 1887-ին, այն է՝ 19-րդ դարի վերջին:

Այսականուով, Միհիթարյան միաբանության՝ աստղագիտությանը նվիրված ուսումնասիրություններում մեր այս հաղորդումը մատոնանշում է Գ. Գալեմքյարյանի ծառայությունը ևս:

1889 թվականին Վիեննայի Միհիթարյանների տպարանում աշխարհաբար արևմտահայերենով լույս է տեսել 27-ամյա կուսակրոն քահանա Գ. Գալեմքյարյանի գուտ բնագիտական բնույթի «Մոմագրություն» խորագիր կրող 68 էջանոց աշխատությունը: Մինչև այդ հայ իրականության մեջ մոմագրությանը նվիրված որևէ գիրք լույս չի տեսել<sup>7</sup>:

Հիշյալ գրքի տիտղոսաթերթում գրված է հետևյալը. «Մոմագրություն. արդի յառաջադիմութեան մէջ 21՝ սուսերագիծ պատկերով Ի. Հ. Գրիգորիս Վ. Գալեմքեարեան, Միհիթ. ուխտ. Վիեննա, Միհիթարեան տպարան 1889»:

Ինչպես տեսնում ենք, ըստ բերված տվյալի, Գ. Գալեմքյարյանն է հիշյալ գրքի հեղինակը: Սակայն մատենագիտական բոլոր աղբյուրներում<sup>8</sup> մեզ համար անհասկանալի պատճառներով հիշյալ աշխատությունը դիտարկվում է որպես թարգմանություն:

«Մոմագրություն»-ը բացվում է «Ի՞նչ է մոմ, և ի՞նչպէս կը ստացուի» նախնական գիտելիք պարունակող գլուխվ. «Մոմը ճարապի նման գոյացութիւն մըն է, որ գլխաւորաբար կը գտնուի մեղուաց բշիշմերու մէջ, քայլ նաև յառաջ կը բերուի այլնայլ տմկեր՝ որոնք ծաղկի փոշեաց, պտղոց հիւթոյն մէջ եւ կամ կեղենի ու տերեւոց մակերեւոյթին վրայ բազմութեամբ մոմ կ'ունենան:

Մեղուաց յառաջ բերած մոմը կը կոչուի՝ «մեղրամոմ» կամ՝ պարզապէս մոմ, իսկ տնկէ հանուածը՝ տմկային կամ՝ բռւսական մոմ:

Ինչպէս մեղրը՝ նոյնպես մեղրամոմը մեղուին արտադրութիւնն է, բայց ոչ թէ մեղուն նոյնը կը ժողովէ՝ ինչպես ունաճը կը կարծէին: Թէ մեղուք ի՞նչ նյութէ կը պատրաստեն մոմն, պահճըմ՝ թէ արդեօք մեղրի՞ հիւթէն մոմը կը գտնեն, թէ ծաղկի փոշին մոմն ալ յինքեան կը բովանդակէ, դեռ ցայսօր ստուգութեամբ չի գիտցուիր»:

<sup>6</sup> Գ. Գալեմքյարյան, Եջվ. ուսումնասիրությունը, Էջ 18:

<sup>7</sup> «Մոմագրություն» հիշյալ գրքի լույս գետներու 14 փարի առաջ, 1875 թվականին, Վեննեփիլի Միհիթարյանների դրաբանական անդամության անդամ Մանվել Քաջունու (1823-1903 թթ.) «Ալուսւագրանութիւն» կամ շինմարան գիտելինաց գիրքը: 716 էջանոց և նույնպես աշխարհաբարով գրված հիշյալ գործը հրապարակվել է երեք անգամ՝ 1875, 1897 և 1909 թվականներին: Միհիթարյան միաբանության բնագիտական հրապարակություններում Մ. Զաքունու հիշյալ աշխատությունը միակն է, որ հրապարակվել է երեք անգամ: Ի թիվս մի շաբաթ արենսդորֆի, Մ. Զաքունին գրքի երկու էջերում անդրադարձել է. նաև մոմն պարբռափենու պարզապնյան մեթոդներին:

<sup>8</sup> Ա. Ղազիկյան, Դայկական նոր մարդնագիտություն և հանրագիտաբար հայ կյանքի, Վեննեփիլ, 1909-1912, Էջ 394: Ն. Ռուկանյան և որիշներ, Հայ գիրքը 1851-1900 թվականներին, Երևան, 1999, Էջ 406:

Գրքում առկա 21 Ակար-պատկերները, գիտական և պատմական բովանդակալից տեղեկությունները այն դարձնում են յուրօրինակ մի գիրք- տեղեկատու մոմի հատկությունների, պատրաստման և հարակից այլ հարցերի վերաբերյալ:

Խիստ ինքնատիպ են Գ. Գալեմքյարյանի՝ բնական գիտություններից երկուսի՝ ֆիզիկայի և քիմիայի համեմատ ունեցած վերաբերմունքը: Քաջ գիտակցելով, որ շատերի համար խիստ հայեցված քիմիական այն կամ այն տերմինը աճիասկանալի կլիմի, նա հայերեն տերմինի կողմէն, փակագծում, միշտ դրել է դրա լատինական համարժեքը: Այսպես. ածխածին ծծմբը (sulfure de carbone), բնակնդրիկի (benzine), քլորակերպ (chloroform): Ահա և մոմի ֆիզիկական մի քանի հատկանիշները «Մոմի տեսակարար կշիռն է 0,965 մինչեւ 0,972: Զուտ մեղրամոմի հալելու աստիճանն է 62 մինչեւ 64 Կերս: Եթէ աւելի շերմութեան մէջ ձգուի՝ կը տարալուծուի եւ կը շոգիանա, բայց իւղերու եւ ճարպերու պէս այրածի հոտ չի ձգէր»:

Մեղրամոմի տեսակներից մեղինակը նշել է երկու տասնյակից ավելի. ավստրիական, սելիզիական, լիթական, հունգարական, թուրքական, խապանական և այլն: Բուսական մոմի նեսակներից նշվում են ճապոնականը, չինականը, արմավամոմը և բրագիլականը:

Ի՞՞նչ է ստիպել Միկրոարյան միաբանության այս հոգևոր գործիքն 19-րդ դարի վերջին լույս ընծայելու նմանատիպ մի աշխատություն:

Պատճառը դյուրին բացատրելի է: Միկրոարյան միաբանության բնագիտական ժառանգության մանրակրկիտ ուսումնասիրությունը մեզ քերել է հետևյալ եզրակացության: Դեռևս 18-րդ դարի վերջից նրանց՝ բացի զուտ բնագիտական ուսումնասիրություններ հրատարակելուց, միշտ հետաքրքրել է հայ արհեստավորին մատչելի գրքեր լույս ընծայելու ազգանվեր գործը: Հիշենք միայն 1830-ին Վենետիկում աշխարհաբարով լույս տեսած Մելքոն Աղաչշաղալյանցի «Համառու արուեստաբանութիւն եւ նորանոր հնապր» արհեստներին պիրված 244 էջանոց աշխատությունը:

Կա նաև մեկ այլ պատճառ: Մոմի պատրաստման արհեստը ավելի շատ զարգացած է եղել Արևմտյան Հայաստանում, ուստի և Եվրոպայում ապրող և գործող հայ արհեստավորների, ինչու չէ նաև հենց հայկական եկեղեցիներում ու վանքերում մոմեր պատրաստող վարպետների համար մոմագործության գիրք էր անհրաժեշտ:

Ահա թե ինչ է գրել Մահաքիա արքեպիսկոպոս Օրմանյանը. «Մեղրամոմի արհեստն ավելի զարգացած լինելով լշջմիածնի կողմերում, այնտեղի եկեղեցիները միայն մեղրամոմ են գործածել, մինչդեռ մեր կողմերում նվազել է կամ ավելի միշտ դադարել է մեղրամոմի կիրառությունը սեղանի վրա: Այժմ միայն ուստի և բարեսպաշտության համար, կամ պաշտոնյաների ձեռքին վառած մոմերն են մեղրամոմ»<sup>9</sup>:

Մոմագործության հարցերից բացի Գ. Գալեմքյարյանի աշխատությունում քննարկված են այլ հարցեր ևս: Այսպես, գոյքի 66-րդ էջում տրված է մոմաթղթի պատրաստման տեխնոլոգիան. «Հասարակ տպագրութեան գործածուած թղթեն թերթ մը կ'առնուի, կը տարածուի, եւ տաք արթուկ մը վրայէն կանցուի, մէկալ ձեռօք մոմի կտոր մը արթուկին ետևէն թղթի վրա քելով: Մոմը տաք թղթին մէջ կը թափանցէ եւ մոմապատ կ'ըլլայ: Այս թղթով քաղց-

<sup>9</sup>Մ. Օրմանյան, Շիսական բառարան, Երևան, 1992, էջ 102:

ւեմեաց շերու բերանը կը փակող որպէս զի օդ չմտնէ, և ընդհանրապէս՝ ուր որ օդն արգելել ուզո՞ւի՝ կը գործածովի»:

Գ. Գալեմքյարյանի՝ վերը Բիշատակված բնագիտական ուսումնասիրությունների մասին մինչ այժմ Հայաստանում ոչ մի տող չի հրապարակվել:

Երևանում 1960 թ. լուս տեսած աշխատություններից մեկում նրա մասին գրված են միքանի Ժլատ տողեր. «Եղել է Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ: Խմբագրել է «Հանդէս ամսօրեալ»-ն: Ունի Բայագիտական շատ աշխատություններ»<sup>10</sup>:

Հիշյալ երկու տողերին հաջորդում է Գ. Գալեմքյարյանի աշխատությունների մատենագիտական ցանկը, որտեղ չի նշված «Մոմագրութիւնը»:

Գ. Գալեմքյարյանին հաշորդ անդրադառնորդ Ա. Առաքելյանն է. «Վիեննայի Մխիթարյան միաբանությունը հայ բանասիրությանը տվել է մի շարք ականավոր դեմքեր, ինչպիսիք են՝ Հովհաննես, Գալործյան, Գարագաշյան, Ավգերյան, Գալեմքյարյան, Տաշյան, Մենավիշյան, Ալիմյան և այլոք»<sup>11</sup>:

Մխիթարյան միաբանության այդ բազմաշխատ երախտավորի կենսագրությանը Հայաստանում առաջին անգամ անդրադառնորդ է Գ. Ստեփանյանը<sup>12</sup>: Նշելով Գ. Գալեմքյարյանի հրատարակած աշխատությունները, Գ. Ստեփանյանը ևս չի նշել «Մոմագրութիւնը»:

Վիեննայի Մխիթարյանների տպարանում լուս տեսած «Մոմագրութիւն» մասին ինչ-ինչ պատճառներով «Հանդէս ամսօրեալ»-ում ոչ մի տող չկա Գ. Գալեմքյարյանի մահախոսականում անգամ:

19-րդ դարի երկորորդ կեսին և 20-րդ դարի առաջին քառորդին և՛ Վենետիկի, և՛ Վիեննայի Մխիթարյանները շարունակում էին իրենց գիտական և գրական առաքելությունը, և Գրիգորիս Գալեմքյարյանը հիշյալ ժամանակահատվածի Մխիթարյան միաբանության գիտության և մշակույթի չարքաշ և ճգնակյաց աշխատավորներից մեջն էր:

<sup>10</sup> Հայ գիտնականներ, հրապարակախոսներ, ժուռնալիստներ, Երևան, 1960, լ. 68: Այս ժողովածուի հնդինական Դուքսաններ Պետրոսյանի (1892-1961) մասին տիւն Գ. Սրբիանյան, Կննսագրական բառարան, հասկրո 3, Երևան, 1990, լ. 272:

<sup>11</sup> Ա. Ասարելյան, Հայ ժողովրդի մրավոր մշակույթի զարգացման պարմություն, հ. 2, Երևան, 1964, լ. 322:

<sup>12</sup> Կենսագրական բառարան, հ. Ա, Երևան, 1973, լ. 215: